ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2024 թ. N 58-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՎԵՐՍԿՍՎԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածին, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466-րդ, 468-րդ, 612-րդ հոդվածներին, 624-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, հաշվի առնելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության տնօրենի՝ ս/թ փետրվարի 13-ի դիմումը (մտից N 301, 19.02.2024 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1,1 հա ընդհանուր մակերեսով, 10-016-0208-0046 ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ հողամասի (հողատեսքը՝ վարելահող)՝ 2011 թվականի փետրվարի 3-ին Գնդեվազի գյուղապետարանի և «Գեոթիմ» ՓԲԸ-ի (այժմ՝ «Լիդիան Արմենիա» ՓԲԸ) միջև կնքված վարձակալության պայմանագիրը ճանաչել վերսկսված՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի ժամկետի ավարտից հետո վարձակալը՝ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը, վարձատուի առարկությունների բացակայությամբ, շարունակել է օգտվել հողամասից:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը ճանաչվում է վերսկսված նույն պայմաններով անորոշ ժամկետով, բայց ոչ ավել՝ քան 25 տարին (առավելագույն ժամկետը՝ 26.02.2049 թվական). կողմերի համաձայնությամբ պայմանագիրը կարող է լուծվել ցանկացած պահի:

3.«Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031088 հաշվեհամարին վճարելու վարձավճարի՝ 10.11.2018թ.–ից 01.01.2024 թ. առաջացած պարտավորությունը՝ 291117 (երկու հարյուր իննսունմեկ հազար հարյուր տասնյոթ) դրամի չափով և տուգանք՝ 135 229 (հարյուր երեսունհինգ հազար երկու հարյուր քսանիններ) դրամի չափով:

4. «Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերության հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին համաձայնագիր:

5. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է «Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերության կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ Ընկերությանը որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2024թ. N 59-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 5-Ի N 3-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի՝ ս/թ փետրվարի 16-ի N N 01/15/1161-2024 գրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 5-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0293-0006 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման՝ 2024 թվականի հունվարի 5-ի մրցույթի արդյունքները հաստատելու մասին» N 3-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման նախաբանում՝ «հոկտեմբերի 31» ամսաթիվը փոխարինել «փետրվարի 24» ամսաթվով, իսկ «84» թիվը «19» ամսաթվով,

2) որոշման 1-ին կետում՝ «համայնքային» բառը փոխարինել «պետական» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2024 թ. N 60-Ա

ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ (ԾԱԾԿԱԳՐԵՐ՝ 3.1-7 ԵՎ 3.1-8) ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3–րդ և 10-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2024 թվականի փետրվարի 9-ի N 241-Ա հրամանով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում կատարված լրացմանը համապատասխան՝ ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2008 թվականի դեկտեմբերի 4-ի N 04-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի յուրաքանչյուր ենթախմբի ընդհանուր նկարագրի հիման վրա հաստատել Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 3.1-7) և ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (պաշտոնի ծածկագիր՝ 3.1-8) պաշտոնների անձնագրերը՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 փետրվարի 2024 թ. N 61-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ՝ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԲԱԺԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ և 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետերին և «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածին համապատասխան՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի N 18 հասցեում գտնվող անշարժ գույքը՝ բուժարանը (կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0024-0017) բաժանել երկու առանձին գույքային միավորների՝ ըստ Ա/Ձ Անդրանիկ Ներսիսյանի կողմից տրամադրված հատակագծերի. չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանքներ՝ 2024VVQSGQ և 2024CTE6SP:

2. Սույն որոշման 1-ին կետի հիմքով առաջացած նոր գույքային միավորներին տրամադրել հետևյալ հասցեները՝

0.02094 հա մակերեսով մասին՝ Ջերմուկ համայնքի, գ. Գնդեվազ, 5-րդ փողոց N 18

0.00498 հա մակերեսով մասին՝ Ջերմուկ համայնքի, գ. Գնդեվազ, 5-րդ փողոց N 18/1

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 26
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2024 թ. N 62-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ10-016-0284-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 94-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Ջերմուկի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 84-Ա որոշման հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 06.12.2023 թ. N 01/06-1-1/8358-2023 գրությամբ տրված դրական եզրակացությունը և հողամասը վարձակության իրավունքով տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 26-ի N 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել 2024 թվականի փետրվարի 26-ին կայացած պետական սեփականություն համարվող, Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 0,51631 (զրո ամբողջ հիսունմեկ հազար վեց հարյուր երեսունմեկ հարյուրհազարերորդական) հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0015) վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի հետևյալ արդյունքները՝

· *Մրցույթում հաղթող ճանաչել մրցույթի միակ մասնակից Ռոման Վալերիկի Մկրտչյանին:*

· *Վարձակալության իրավունքի ժամկետը՝ 01.03.2034 թ.:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարի չափը՝ 30000 (երեսուն հազար) դրամ է /վճարման հաշվեհամար՝ 900365031088/:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման նպատակը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու՝ որպես արոտավայր օգտագործելու համար*

. *վարձակալին չի թույլատրվում՝*

ա/ առանց վարձատուի լրացուցիչ համաձայնության հողամասը տրամադրել ենթավարձակալության,

բ/ հողամասը լիովին կամ մասնակիորեն տրամադրել գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձին՝ համատեղ օգտագործման նպատակով,

գ/ հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքը գրավադրել,

դ/ կատարել բարելավումներ:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի տարածքի մաքրման և բարեկարգման պարտավորությունը կրում է վարձակալը:

3. Ռոման Վալերիկի Մկրտչյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ռոման Վալերիկի Մկրտչյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 փետրվարի 2024 թ. N 63-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ10-016-0284-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ՝ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 26-Ի ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 94-րդ հոդվածի, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Ջերմուկի համայնքի ավագանու 2023 թվականի հոկտեմբերի 31-ի N 84-Ա որոշման հիման վրա, հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 06.12.2023 թ. N 01/06-1-1/8358-2023 գրությամբ տրված դրական եզրակացությունը և հողամասը վարձակության իրավունքով տրամադրելու մասին Ջերմուկ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման մրցութային հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 26-ի N 4 արձանագրությունը՝ ***որոշում եմ՝***

1. Հաստատել 2024 թվականի փետրվարի 26-ին կայացած պետական սեփականություն համարվող, Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 0,51816 (զրո ամբողջ հիսունմեկ հազար ութ հարյուր տասնվեց հարյուրհազարերորդական) հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0284-0016) վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի հետևյալ արդյունքները՝

· *Մրցույթում հաղթող ճանաչել մրցույթի միակ մասնակից Գագիկ Մաղլենի Մուշկամբարյանին:*

· *Վարձակալության իրավունքի ժամկետը՝ 01.03.2034 թ.:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման տարեկան վարձավճարի չափը՝ 30000 (երեսուն հազար) դրամ է /վճարման հաշվեհամար՝ 900365031088/:*

· *Վարձակալության իրավունքի տրամադրման նպատակը՝ գյուղատնտեսական գործունեություն իրականացնելու՝ որպես արոտավայր օգտագործելու համար*

. վարձակալին չի թույլատրվում՝

ա/ առանց վարձատուի լրացուցիչ համաձայնության հողամասը տրամադրել ենթավարձակալության,

բ/ հողամասը լիովին կամ մասնակիորեն տրամադրել գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձին՝ համատեղ օգտագործման նպատակով,

գ/ հողամասը կամ դրա նկատմամբ իրավունքը գրավադրել,

դ/ կատարել բարելավումներ:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի տարածքի մաքրման և բարեկարգման պարտավորությունը կրում է վարձակալը:

3. Գագիկ Մառլենի Մուշկամբարյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիր:

4. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Գագիկ Մառլենի Մուշկամբարյանի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. փետրվարի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 փետրվարի 2024 թ. N 64-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՉՁԵՎԱԿԵՐՊՎԱԾ ՀԱՄԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 19.12.2023 ԹՎԱԿԱՆԻ N 397-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 80-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասին 1-ին կետով և 37-րդ հոդվածով, հիմք ընդունելով Երևան քաղաքի բնակիչ Գնել Ռաֆիկի Սարգսյանի դիմումը (մտից՝ N 346, 28.02.2024 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Հաշվի առնելով այն, որ 2023 թվականի դեկտեմբերի 18-ին կայացած համայնքային սեփականություն համարվող, Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 0,36024 (զրո ամբողջ երեսունվեց հազար քսանչորս հարյուրհազարերորդական) հա մակերեսով հողամասի (նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, հողատեսքը՝ արոտավայր, կադաստրային ծածկագիրը՝ 10-016-0230-0113) վարձակալության իրավունքի տրամադրման մրցույթի վերաբերյալ կազմված արձանագրության հիման վրա համայնքի ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակազմի պաշտոնատար անձի և մրցույթում հաղթած անձի՝ Գնել Ռաֆիկի Սարգսյանի միջև չի կնքվել հողի վարձակալության պայմանագիր՝ մրցույթի արդյունքները համարել չձևակերպված, իսկ վարձակալության իրավունքը՝ չփոխանցված:

2. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 19-ի «Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում գտնվող 10-016-0230-0113 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի վարձակալության իրավունքի տրամադրման՝ 2023 թվականի դեկտեմբերի 18-ի մրցույթի արդյունքները հաստատելու մասին» N 397-Ա որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2024 թ. փետրվարի 28
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2024 թ. N 65-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի փետրվարի 10-ի N 18-Ա որոշման (այսուհետ՝ Որոշման) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

ա/ N 3 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 2.3-1 ծածկագրով պաշտոնի (աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի գլխավոր մասնագետ) անձնագրի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹ-ՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետի «ա» ենթակետում «համայնքապետարանի և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների ու բյուջետային հիմնարկների» բառերը փոխարինել «համայնքապետարանի աշխատակազմի, «Ջերմուկի կոմունալ տնտեսություն», «Ջերմուկ համայնքի մարզամշակութային կենտրոն» և «Ջերմուկ համայնքի Շ. Ազնավուրի անվան արվեստի դպրոց» համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ՀՈԱԿ–ներ)» բառերով, իսկ «դ» և «ը» ենթակետերում՝ «համայնքապետարանի և համայնքային ենթակայության հիմնարկների» բառերը՝ «համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ–ների» բառերով:

բ/ N 9 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 3.1-2 ծածկագրով (աշխատակազմի ֆինանսատնտեսա-գիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ) պաշտոնի անձնագրի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՆԵՐ» մասի 11-րդ կետում ավելացնել նոր՝ «ժբ» և «ժգ» ենթակետեր՝ հետևյալ բովանդակությամբ՝

«ժբ) իրականացնում է բացօթյա առևտրի կետերից տեղական տուրքերի գանձումները, ըստ անհրաժեշտության կազմում է բացօթյա առևտրի կետերից տեղական տուրքերի հաշվարկման ու գանձման հաշվետվություններ, վերլուծություններ ու տեղեկանքներ, ուսումնասիրում է բացօթյա առևտրի կետերից տեղական տուրքերի վճարումների հաշվարկման ու դրանց գանձումների վերաբերյալ

գանգատներն ու դիմումները, արդյունքների մասին զեկուցում բաժնի պետին, ներկայացնում առաջարկություններ, բացօթյա առևտրի կետերից տեղական տուրքերի հարցերով դիմած քաղաքացիներին ապահովում է անհրաժեշտ խորհրդատվությամբ և տեղեկատվությամբ»,

«ժգ) իրականացնում է համայնքի տարածքում աղբահանության, այդ թվում՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի աղբահանության վճար վճարողների հետ տարվող աշխատանքները՝ աղբահանության պայմանագրերի կնքման, դրանց կատարմանը հետևելու, վճարների հավաքագրման մասով, վերահսկում է համայնքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքի սեփականատիրոջ կամ տիրապետողի՝ իր տիրապետման տակ գտնվող անշարժ գույքի և դրան հարակից ընդհանուր օգտագործման տարածքի պարտադիր բարեկարգման իրականացումը, արձանագրում է խախտումները, այդ մասին զեկուցում է բաժնի պետին,»

գ/ «N 10 հավելվածով հաստատված համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության 3.1-3 ծածկագրով (աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ) պաշտոնի անձնագրի «ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» մասի 11-րդ կետի «ե», «եա», «եբ», «եգ» և «եդ» ենթակետերի բովանդակություններից հանել «, ինչպես նաև բացօթյա առևտրի կետերից» կետադրական նշանը և բառերը:

2. Սույն որոշման 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերն ուժի մեջ են մտնում նշված պաշտոնները զբաղեցնող համայնքային ծառայողներին որոշման ընդունման մասին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշման 1-ին կետի «ա» ենթակետն ուժի մեջ է մտնում համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր՝ 3.1-8) թափուր պաշտոնը համալրելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2024 թ. փետրվարի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 մարտի 2024 թ. N 66-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N 122-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ 2023 թվականի հունիսի 16-ի Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-16062023-10-0123 որոշումը և հիմք ընդունելով Ա/Ձ Միքայել Հակոբյանի կողմից տրամադրված հողամասի հատակագիծը՝ չափագրման տվյալների մուտքագրման տեղեկանք՝ 2023HL4NWT, ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի մայիսի 3-ի ««Լիդիան Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար հողամասի սերվիտուտ սահմանելու մասին» N 122-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում՝ «1,1842» թիվը փոխարինել «1,10851» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. մարտի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 մարտի 2024 թ. N 67-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 179-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ 2023 թվականի հունիսի 16-ի Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-16062023-10-0123 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի հունիսի 1-ի «Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Գնդեվազ գյուղում գտնվող 0,50809 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը որպես առանձին միավոր ճանաչելու և համայնքային սեփականություն գրանցելու մասին» N 179-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա/ որոշման վերնագրում և 1-ին կետում՝ «0,50809» թիվը փոխարինել «0,43603» թվով,

բ/ որոշման 1-ին կետում «2023PDUP9Q» ծածկագիրը փոխարինել «2023HL4NWT» ծածկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. մարտի 1
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2024 թ. N 68-Ա

ՄԱՐԻԱՄ ՍԱՆԹՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ «ՄՆԱՍՀԷԿ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎՃԱՐԻ ՈՐՈՇԱԿԻ ՄԱՍԻ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏՈՒՅԺԻ ՈՐՈՇԱԿԻ ՄԱՍԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 216-րդ հոդվածի, 417-րդ հոդվածի 3-րդ մասի և 431-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 16.03.2020 թվականի «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» N 298-Ն որոշման 1-ին կետի և 27.09.2020 թվականի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» N 1586-Ն որոշման, հաշվի առնելով Մարիամ Էդվարդի Սանթրոսյանի և «ՄՆԱՍՀԷԿ» ՍՊ ընկերության տնօրեն Գ. Գյուլնազարյանի դիմումները (մտից N 810, 08.05.2023 թ. և մտից N 39, 11.01.2024 թ.)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Անտառային փողոցի N 15 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի (ջրավազաններ և դրանց կից վարչական շենք) վարձակալ Մարիամ Էդվարդի Սանթրոսյանին ազատել 2020 թվականի մարտի 1-ից 2021 թվականի ապրիլի 1-ն ընկած և 2022 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակաշրջանների համար հաշվարկված 170000 (հարյուր յոթանասուն հազար) դրամ վարձավճարի վճարման պարտավորությունից՝ ներելով նշված ժամանակաշրջանի և ս/թ հունվարի 15-ից մինչև սույն որոշման ընդունման օրը հաշվարկված 65344 (վաթսունհինգ հազար երեք հարյուր քառասունչորս) դրամ տույժի վճարումը՝ հաշվի առնելով Ջերմուկ համայնքի և Մարիամ Էդվարդի Սանթրոսյանի միջև 2019 թվականի մայիսի 13-ին վարձակալության պայմանագրի 8-րդ՝ ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ) բաժնով սահմանված հանգամանքները, մասնավորապես՝

ա/ աշխարհում և ՀՀ-ում նոր կորոնավիրուսային հիվանդության՝ COVID-19-ի տարածմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի մարտի 16-ից ժամը 18:30-ից սկսած մինչև 2020 թվականի սեպտեմբերի 11-ը ժամը 17:00-ն ներառյալ ժամկետով հայտարարված է եղել արտակարգ դրություն, ինչի պայմաններում կիրառվել են իրավունքների ու

ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ, արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցներ,

բ/ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020 թվականի սեպտեմբերի 27-ից սկսած մինչև 2021 թվականի մարտի 24-ը ներառյալ (հիմք՝ ՀՀ Ազգային Ժողովի 2021 թվականի մարտի 24-ի ԱԺՈ-001-Ն որոշում) ժամկետով հայտարարված է եղել ռազմական դրություն, որի շրջանակներում կիրառվել են իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումներ,

գ/ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին տեղի ունեցած ադրբեջանական ագրեսիան Ջերմուկ քաղաքի դեմ, որի հետևանքով անհեռանկարային է դիտարկվել վարձակալի կողմից գույքի հետագա տիրապետումը

դ/ արտակարգ և անկանխելի հանգամանքների՝ COVID-19 համաճարակի և 44-օրյա պատերազմի ու ջերմուկյան ռազմական գործողությունների պատճառով ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու նպատակով վարձակալած գույքը չի օգտագործվել, որի հետևանքով պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել:

2. Մարիամ Էդվարդի Սանթրոսյանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված արտոնությունների կիրառումից հետո մնացող պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց՝ համաձայն հավելվածի:

3. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Հյուսիսային փողոցի 1-ին փակուղու N 1/2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը՝ հողամասը, սերվիտուտի իրավունքով օգտագործող «ՄՆԱՍՀԷԿ» ՍՊ ընկերությանը 2022 թվականի սեպտեմբերի 12-ից ազատել սերվիտուտի վճարի վճարման պարտավորությունից (սույն որոշման ընդունման օրվա դրությամբ պարտավորությունը կազմում է 83288 դրամ):

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մ. Է. Սանթրոսյանին և «ՄՆԱՍՀԷԿ» ՍՊ ընկերության տնօրեն Գ. Գյուլնազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2024 թ. մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2024 թ. N 69-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒԶԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 89-Ն և 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 98-Ն որոշումների, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Վասակի Հովսեփյանի հայտը (մտից՝ N 156, 2024 թվականի հունվարի 31)՝ ***որոշում եմ՝***

1. Անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Վասակի Հովսեփյանին տալ 2024 թվականի ընթացքում Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի N 16/1 հասցեում գտնվող՝ առևտրային սրահի վերածված բնակարանում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 25):

2. Անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Վասակի Հովսեփյանին պարտավորեցնել ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի համար վճարելու տեղական տուրք Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին՝ 9750 (ինը հազար յոթ հարյուր հիսուն) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Վասակի Հովսեփյանին պարտավորեցնել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2023 թվականի մարտի 20-ի «Ջերմուկ քաղաքի բնակիչ Մխիթար Համբարձումյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի գործառնական նշանակությունը փոփոխելու թույլտվություն տալու մասին» N 74-Ա որոշման հիմքով փոփոխել Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների փողոցի 16-րդ շենքի N 1 հասցեում գտնվող բնակարանի (հիմք՝ սեփականության իրավունքի N 23102018-10-0011 վկայական) գործառնական նշանակությունը որպես հասարակականի՝ խանութ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռուզաննա Վասակի Հովսեփյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ դեկտեմբերի 31-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մարտի 2024 թ. N 70-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգի» հիման վրա՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Իսրայել Օրու փողոցի վրա գտնվող 0,1 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հողամասը, գործառ–նական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման. չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2024MFF5WD:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Իսրայել Օրու փողոց N 3/1:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. մարտի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 մարտի 2024 թ. N 71-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 8-Ի N 5-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա, հաշվի առնելով ՀՀ Կադաստրի կոմիտեի՝ 2023 թվականի հունիսի 16-ի Գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին N Կ-05032024-10-0026 որոշումը՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2024 թվականի հունվարի 8-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 5-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 4-րդ կետում՝ «22/30» թիվը փոխարինել «23/30» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. մարտի 5
Ջերմուկ